

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդեն երրորդ տարին անընդմեջ Հայաստանն ընդգրկվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՉՏՖ) Մրցունակության համաշխարհային զեկույցում (ՄՀԶ): ՄՀԶ-ն առաջին անգամ հրատարակվել է 1979 թվականին և տարիների ընթացքում դարձել երկրների մրցունակության գնահատման աշխարհի առաջատար և առավել համապարփակ գործիքներից մեկը: Այսօր այն ընդգրկում է 131 երկիր և այդ երկրների մրցունակությունը գնահատում է տեղեկատվության տարբեր աղբյուրներից ստացված 110 ցուցանիշների հիման վրա:

Չնայած այն բանին, որ Հայաստանն ընդգրկված է ՄՀԶ-ում, «**Հայաստան. Ազգային մրցունակության զեկույցի**» (ՀԱՄ զեկույց) առաջին տարեկան թողարկումն առաջին փորձն է մրցունակության արդի գաղափարական հենքերի կիրառմամբ առավել խորը և լայն վերլուծական հայացք գցելու Հայաստանի միջազգային մրցունակության դիրքի և դրա վրա ազդող գործոնների վրա: Ազգային մրցունակության նման զեկույցներ պատրաստել են մի շարք այլ երկրներ ևս: Ազգային մրցունակության ամենավաղ ու խիստ անաչառ ու մանրամասն զեկույցներ պատրաստել են Իռլանդիան և ԱՄՆ-ն: Ազգային մրցունակության զեկույցները կարող են դիտվել որպես «վերլուծական և համադրական (սինթեզային) հայելիներ», որոնք արտացոլում են երկրի իրավիճակը համաշխարհային համատեքստում և, այդպիսով, օգտակար գործիք են ապագա զարգացման ռազմավարությունների մշակման համար:

Հայաստանի Ազգային մրցունակության զեկույցը «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի հետազոտական խմբի ջանքերի արդյունքն է: Սույն զեկույցի հեղինակները հավատացած են, որ ՀԱՄ զեկույցը կնպաստի Հայաստանի մրցունակության բարելավմանն ուղղված երկխոսությունների և վերլուծությունների խորացմանը մի քանի ճանապարհներով:

Նախ՝ ՀԱՄ զեկույցը կառավարության ու գործարար շրջանակների համար կծառայի իբրև տեղեկությունների աղբյուր ու կօգնի համեմատել և գնահատել Հայաստանի առաջընթացը: Այն կօգնի Կառավարությանը հասկանալ Հայաստանի ուժեղ և թույլ կողմերը, սահմանել քաղաքականության գերակայությունները ու դիտանցել մրցունակության բարձրացմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը: Իսկ մասնավոր հատվածի ղեկավարները ՀԱՄ զեկույցում կգտնեն տեղեկություններ հայաստանյան ընկերությունների ուժեղ և թույլ կողմերի մասին: Թե՛ օտարերկրյա և թե՛ հայկական ընկերությունները զարգանալու համար կարիք ունեն մրցունակ գործարար միջավայրի: ՀԱՄ զեկույցի վերլուծության զգալի մասը հիմնվում է ընկերությունների ղեկավարների շրջանում անցկացվող հարցումների արդյունքների վրա, և, այդուհանդերձ, մասնավոր հատվածի ղեկավարները հնարավորություն կունենան ծանոթանալ հայաստանյան միջավայրին տված գնահատականներին:

Երկրորդ՝ ՀԱՄ զեկույցը կարող է մրցունակությանն առնչվող առաջնայնությունների շուրջ պետական ու մասնավոր հատվածների միջև երկխոսության դաշտ ապահովել: ՀԱՄ զեկույցը կխթանի մրցունակության բարձրացմանն ուղղված միջոցների և նախաձեռնությունների շուրջ առողջ բանավեճը և դրա հետ մեկտեղ անաչառ տվյալներ կապահովի այդ բանավեճի համար:

Երրորդ՝ այն կարող է օգնել վերահաստատել միջազգային գործարար համայնքին ուղղված հանձնառությունն առ այն, որ Հայաստանը մտադիր է դառնալ բարձր մրցունակությամբ երկիր՝ ապագայում պահպանելով տնտեսական աճի ազդեցիկ տեմպը: Միջազգային համայնքը ՀԱՄ զեկույցում կգտնի անաչառ շարունակական գնահատականներ այդ ուղղությամբ Հայաստանի ունեցած առաջընթացի վերաբերյալ:

Չորրորդ՝ Հայաստանի համալսարանների գործարարության, տնտեսագիտության, իրավագիտության, ճարտարագիտության և սոցիոլոգիայի (ընկերագիտության) բաժինների դասախոսները, գիտնականները և ուսանողները կարող են ՀԱՄ զեկույցում հարուստ տեղեկություններ ու վերլուծություններ գտնել, որոնցով կընդլայնեն իրենց պատկերացումներն արագորեն փոփոխվող մեր երկրի օրենսդրական, տնտեսական ու գործարար միջավայրերի մասին: Հեկույցը կարող է սկզբնակետ ծառայել հետագա ուսումնասիրությունների կամ հետազոտությունների համար: Համալսարանների ղեկավարները ՀԱՄ զեկույցի էջերում կտեսնեն Հայաստանի տնտեսության զարգացման գործում համալսարանների դերի կարևորության հաստատումը: ՀԱՄ զեկույցում խրախուս-

վում է համալսարանների և մասնավոր հատվածի միջև կապերի սերտացումը: Ուսանողները զեկույցում կգտնեն հղումների համար հիանալի նյութեր, որոնք կարող են հիմք ծառայել հոդվածների, ուսումնասիրությունների և գիտական աշխատությունների համար:

Հինգերորդ՝ հասարակական կազմակերպությունները կարող են սույն զեկույցում բարձրակարգ նյութեր գտնել պետական ու մասնավոր հատվածների միջև երկխոսությունների անցկացման բարեփոխումների օրակարգի վերաբերյալ: Քաղաքացիական հասարակության կայացմամբ մտահոգ կազմակերպությունները կարող են իրենց նպաստը բերել այդ երկխոսություններին: Չեկույցը կարող են օգտագործել նաև գիտահետազոտական հաստատությունները: Իսկ մարզերի ու համայնքների ղեկավարները կարող են ՀԱՄ զեկույցի էջերում իրենց մարզերի կամ համայնքների մրցունակության բարձրացման համար նոր մտքեր գտնել:

ՀԱՄ զեկույցը հասցեագրում է մի շարք առանցքային հարցեր, մասնավորապես.

- Որքան մրցունակ է Հայաստանն այսօր աշխարհի այլ երկրների հետ համեմատած: Որքան մրցունակ են Հայաստանի գործարար միջավայրն ու Հայաստանի գործարարությունը համաշխարհային կտրվածքով:
- Որո՞նք են Հայաստանի մրցակցային ուժեղ ու թույլ կողմերը, և ինչպե՞ս կարելի է զարգացնել ուժեղ կողմերը, իսկ թույլերը՝ շտկել:
- Ի՞նչն է Հայաստանի տնտեսական աճի շարժիչը, և հնարավոր է արդյոք պահպանել տնտեսական աճի նման տեմպը: Հայաստանի միջին քաղաքացին ավելի բարեկեցիկ կյանքով կապրի՞ հաջորդ հինգ տարիներին:
- Հնարավոր է ազգի առաջընթաց զարգացում ապահովել ներկայիս տնտեսական կատարողականով:
- Ո՞րն է մրցունակության կերտման լավագույն ձևը: Որո՞նք պետք է լինեն պետական ու մասնավոր հատվածների միջև երկխոսությունների հիմնական առաջնությունները հաջորդ տարիներին: Որո՞նք են պետական ու մասնավոր հատվածների ու քաղաքացիական հանրության դերերը զարգացման գործընթացում:

Այդ հարցերը հասցեագրելու նպատակով ՀԱՄ զեկույցը կառուցվել է հետևյալ տրամաբանությամբ ու հաջորդականությամբ.

1-ին գլխում ներկայացվում է մրցունակության գաղափարը և ընդգծվում մրցունակության կարևորությունը ազգի, երկրի, ձեռնարկության կամ անհատի զարգացման համար:

2-րդ գլխում խորությամբ դիտարկվում են Հայաստանի տնտեսական նվաճումները՝ բացահայտելու Հայաստանի մրցունակության դիրքի անատոմիան, Հայաստանում տիրող վիճակի առանցքային իրողություններն ու հասկանալու դրանց հիմքում ընկած գործոններն ու պատճառահետևանքային կապերը: Հայաստանի տնտեսական կատարողականը դիտարկվում է միջազգային կտրվածքով, այսինքն՝ տարածաշրջանի հարևան երկրների, ինչպես նաև մրցակից, համեմատելի և որպես հեռանկիչ ընտրված (օրինակելի- benchmark countries) երկրների համեմատությամբ:

3-րդ գլխում պատկերվում է համաշխարհային ասպարեզում Հայաստանի մրցունակության դիրքի բազմաչափ պատկերը և վերլուծվում են այդ դիրքի պատճառները: Այստեղ ներկայացվում է Հայաստանի գործարար միջավայրը, որտեղ գործում, հարստություն և աշխատատեղեր են ստեղծում հայաստանյան ընկերություններն ու գործարարները և քննարկվում է, թե ինչպես են նրանք գործում այդ միջավայրում: Գործարար միջավայրի՝ ինչպես մակրո, այնպես էլ միկրո մակարդակների վերլուծության համար օգտագործվում են վերլուծական արդի առաջավոր միջոցներ:

4-րդ գլխում, որը «համադրության» ու դեպի ապագան նայող գլուխ է, ամփոփվում, համադրվում կամ իրար են միացվում զեկույցի մյուս մասերում կատարված վերլուծական խճանկարի բեկորները, և այդպիսով կազմվում է մի ընդհանրական պատկեր, որում ընդգծված են Հայաստանի հիմնական սահմանափակումներն ու հնարավորությունները: Դրանից հետո փորձ է արվում Հայաստանի հետագա զարգացման շուրջ որոշ մտքեր տալ և առաջարկություններ անել, ապա շոշափվում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ապագա քաղաքականությունների բովանդակությունը, կարճաժամկետ և երկարաժամկետ զարգացման ռազմավարություններ մշակելու և առաջնայնություններ սահմանելու հենքերն ու գործակառույցները (մեխանիզմները), տարածաշրջանում և համաշխարհային մակարդակով Հայաստանի դիրքավորումը:

ԳԼՈՒԽ I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐԸ

Մրցունակության կարևորությունը

Մրցունակությունն այժմ Հայաստանի պետական այրերի, ինչպես նաև հայաստանյան ընկերությունների ղեկավարների առջև ծառայած հիմնական մարտահրավերներից մեկն է: Չնայած տնտեսական աճի աննախադեպ բարձր տեմպին՝ Հայաստանի ՀՆԱ-ի մակարդակը վերականգնվել ու գերազանցել է 1990թ.-ի մակարդակը միայն վերջերս, իսկ աշխատավարձերի մակարդակը դեռևս 1990թ. մակարդակի կեսից ցածր է: Հայաստանի տնտեսական կատարողականը զգալիորեն կախված է եղել արտաքին գործոններից (դրամական փոխանցումներ, միջազգային ֆինանսական ու նվիրատու (դոնոր) կազմակերպությունների օգնություն): Տարածաշրջանային տնտեսական և սոցիալական մեծ ու խորացող անհամաչափությունները, ինչպես նաև Հայաստանի բոլոր շրջանների ու բնակչության բոլոր շերտերի կյանքում որոշակի տնտեսական դիմամիզմ մտցնելու տեսանկյունից բնակչության որոշ շերտերի շարունակական աղքատությունը անհապաղ գործողությունների անհրաժեշտության զգացում են առաջացնում: Դեպի ծով ելք չունեցող երկիր լինելու հանգամանքը առավել ցայտուն է դարձնում Հայաստանը որպես բարձրարժեք, փոխադրման ծախսերից քիչ կախված ապրանքներ ստեղծող երկիր դիրքավորելու անհրաժեշտությունը: Մրցունակության մակարդակից է կախված, թե Հայաստանը կկարողանա արդյոք կայուն ու ներդաշնակ տնտեսական աճ ապահովել այլ գործոնների հաշվին, քան դրսից եկող դրամական փոխանցումները, օտարերկրյա կազմակերպությունների օժանդակությունը, կամ էլ հանքահումքային պաշարների շահագործումն է:

Մրցակցելու ձգտումը մարդու բնության մեջ է: Մենք ապրում ենք մի աշխարհում, որտեղ մրցակցությունը մարդկանց, ընկերությունների, ազգերի ու երկրների փոխգործակցելու հիմնական ձևերից մեկն է: Նրանք մրցակցում են ավելի մեծ օգուտ կամ առավելություն ունենալու, ավելի ուժեղ կամ հզոր լինելու, շուկաներում ավելի մեծ մասնաբաժին կամ շահույթ ունենալու, ինչպես նաև ավելի բարձր կենսամակարդակի ու բարեկեցության հասնելու համար: Մրցակցությունն ավելի սուր ու բարդ է դարձել մեր օրերում, երբ տեղաշարժվելն ու հաղորդակցվելը դարձել են հեշտ ու արագ, իսկ տեխնոլոգիաները զարգանում են օրեցօր: Գլոբալացման ու տեխնոլոգիական առաջընթացի ուժերը լրացուցիչ ճնշում են գործադրում երկրների ու դրանց քաղաքացիների վրա: Ոչ մի երկիր, դեպի ծով ելք ունեցող թե չունեցող, չի կարող խուսափել գլոբալացման ազդեցությունից: Մրցունակությունն է գլոբալացումից օգտվելու և դրա զոհը չդառնալու բանալին: Երկարաժամկետ հեռանկարում Հայաստանի բարեկեցության մակարդակն ու տնտեսական ինքնորոշումը կախված են մրցունակության բարձր աստիճանի հասնելու կարողությունից:


Մրցունակությունն, ինչը մենք սահմանում ենք որպես բարձր և բարձրացող արտադրողականության մակարդակ, ավելի շուտ վերաբերում է ազգի (երկրի) ունակությանը և ոչ թե դրա բնական պաշարների առատությանը: Մրցունակությունը կախված է ազգի՝ համակարգեր կամ միջավայր ստեղծելու ունակությունից, որոնք տվյալ ազգի ընկերություններին ու քաղաքացիներին թույլ կտան արդյունավետորեն օգտագործելու երկրի պաշարներն ու հնարավորությունները: Մրցունակությունը վերաբերում է ազգի, ընկերությունների և քաղաքացիների՝ կատարելագործված ռազմավարություններ ու գործողություններ մշակելու և իրականացնելու ունակությանը, որոնք հնարավորություն են տալիս արդյունավետորեն օգտագործել առկա պաշարներն ու գործոնները: Այլ կերպ ասած՝ **մրցունակությունը արդյունավետ և արտադրողական լինելու ունակությունն է:** Հետևաբար, մրցակցային առավելությունը տարբերվում է համեմատական առավելությունից այն առումով, որ առաջինի դեպքում առավելությունը պայմանավորված չէ հանք ու հումքի առատությունից, աշխատուժի էժանությունից կամ տեղի նպաստավորությունից: Մրցակցային առավելությունն արդյունավետությունն է, որով այդ պաշարներն ու գործոնները վերածվում են արժեքի և որով երկիրը, ընկերությունը կամ անհատը տարբերվում են իրենց նմանակիցներից: Այդուհանդերձ, մրցունակությունը վերաբերում է բարձր արժեք ունեցող ապրանքների և ծառայությունների

(որոնց համար սպառողները պատրաստ են հավելյալ գին վճարել) և ոչ թե չտարբերակված, ստանդարտացված ապրանքների նկատմամբ գործարարների հասկանալու և արտադրելու ունակությամբ: Մրցունակությունը վերաբերում է նաև կառավարության ունակությանը և պատրաստակամությանը՝ վերացնելու խոչընդոտներն ու նվազեցնելու գործարքային ծախսերը, ապահովելու նպաստավոր կանոնակարգեր, ենթակառուցվածքներ ու ծառայություններ:

Մրցունակությունն, ի վերջո, բարեկեցություն է բերում երկրի քաղաքացիներին և կայուն հիմք է ստեղծում հետագա զարգացման համար: Այն տանում է կայուն տնտեսական զարգացման, շարքային քաղաքացիների բարեկեցության բարձրացման և աղքատության կրճատման: Մրցունակությունը միջոց է, որի շնորհիվ հասարակության բոլոր անդամները շահում են տնտեսական աճից: Հետևաբար մրցունակությունը ունի ուժեղ բարոյական և սոցիալական չափումներ:

Մրցունակ ազգերի կամ ընկերությունների նորն արարելու, մշտապես զարգանալու և աշխարհում մրցունակ լինելու մղումն իր հերթին խթանում է միջազգային մրցակցությանը, ավելի է բարձրացնում ու խստացնում միջազգային չափանիշները, տանում է ապրանքների և ծառայությունների որակի բարձրացման, ամբողջ աշխարհում նպաստում տեխնոլոգիական առաջընթացին: Մրցունակությունը շարժիչ ուժ է տեխնոլոգիական առաջընթացի համար և համաշխարհային արժեքի ստեղծման գործընթացում, ինչով էլ այն ավելի նպաստավոր հիմքեր է ստեղծում նաև համագործակցության համար:

Պատկեր 1. Մրցունակությունը հիմնվում է գլոբալացման վրա և տանում համագործակցության



Մրցունակության սահմանումը

«Մրցունակություն» հասկացության բազմաթիվ սահմանումներ կան: Սույն զեկույցում մենք մեր վերլուծությունը հիմնում ենք հետևյալ երկու՝ մեկը մյուսին լրացնող սահմանումների վրա.

1. Ըստ Հարվարդի համալսարանի դասախոս Մայքլ Պորտերի (Porter, 1990թ., 1998թ.)՝ «Մրցունակությունը որոշվում է արտադրողականությամբ, որով ազգը, տարածաշրջանը կամ համալիրը (քլաստերը) օգտագործում են իրենց մարդուժը, բնական պաշարներն ու կապիտալը (հիմնական միջոցները): Արտադրողականությամբ է որոշվում ազգի կամ տարածաշրջանի կենսամակարդակը (աշխատավարձի չափը, կապիտալի և բնական պաշարների հատույցը)»: Այս սահմանմամբ որպես մրցունակության շարժիչ ուժ ընդգծվում է միկրոտնտեսական հիմքը:

2. Խավիեր Սալա-ի-Մարտինը (Sala-i-Martin et al., 2004թ.) և Համաշխարհային տնտեսական Ֆորումը (2005թ.) սահմանում են՝ «Մրցունակությունը ինստիտուտների (սահմանակարգերի), քաղաքականությունների և այլ գործոնների համախումբ է, որոնցով որոշվում է երկրի արտադրողականության մակարդակը և որոնցով, այդուհանդերձ, որոշվում է բարեկեցության կայուն այն մակար-

դակը, որին տվյալ տնտեսությունը կարող է հասնել ներկայում ու միջնաժամկետ հեռանկարում (3-5 տարի)»: Այս սահմանման մեջ հաշվի են առնվում ինչպես մակրոտնտեսական, այնպես էլ միկրոտնտեսական գործոնները՝ որպես խթաններ արտադրողականության և հետևաբար նաև բարեկեցության, ինչին տվյալ ազգը (երկիրը) կարող է հասնել դինամիկ գործընթացում: ՀՏՖ-ն օգտագործում է այս սահմանումն իր մրցունակության համաշխարհային զեկույցում:

Դրա հետ մեկտեղ մենք ընդգծում ենք ազգային մրցունակության էական հատկանիշը, որը ազգի՝ ապրանքներ և ծառայություններ արտադրելու և շուկաներում, հատկապես միջազգային շուկաներում իրացնելու ունակությունն է (Scott et al., 1985թ.):

(Մրցունակություն հասկացության շուրջ լրացուցիչ քննարկում ու սահմանումներ կարող եք գտնել Հավելված 1-ում):

Մրցունակության չափումը

Մրցունակության լավագույն չափումը արտադրողականությունն է: Սակայն բոլոր երկրների համար արտադրողականությանը վերաբերող վիճակագրական տվյալներ գտնելը խիստ դժվար է, իսկ արտադրողականության հաշվարկման համար կիրառվող տարբեր եղանակները թույլ չեն տալիս պատշաճ համեմատություն կատարել: Հաճախ որպես երկրի մրցունակության ցուցանիշի մոտարկում դիտարկվում է մեկ շնչին բաժին ընկնող եկամուտը: Սակայն այդ ցուցանիշով շատ հաճախ հնարավոր չէ բացատրել երկրի մրցունակությունը և կանխատեսել ապագա կատարողականը:

Մրցունակությունը գնահատելու տարբեր աղբյուրներ կան: Դրանց մեջ ամենահեղինակավորներն են համարվում **Համաշխարհային տնտեսական ֆորումի (World Economic Forum), Կառավարման զարգացման միջազգային ինստիտուտի (International Institute for Management Development - IMD) և Արդյունաբերական քաղաքականությունների հետազոտման ինստիտուտի (Institute of Industrial Policy Studies - IPS)** մշակած եղանակները: Սակայն ներկայումս Հայաստանն ընդգրկվում է միայն ՀՏՖ զեկույցներում: Այդ պատճառով սույն ՀԱՄ զեկույցի մենք մեծապես, բայց ոչ ամբողջապես, հենվում ենք մրցունակության գնահատման ՀՏՖ մշակած ցուցիչների վրա:

ՀՏՖ Մրցունակության համաշխարհային զեկույցը (ՄՀՁ) դարձել է երկրների մրցունակությունների գնահատման առաջատար միջոցը: ՄՀՁ-ն երկրների մրցունակության գնահատման ամենահամապարփակ գործիքներից մեկն է, քանի որ հիմնվում է ինչպես պաշտոնական վիճակագրական և հեղինակավոր միջազգային կառույցների թողարկած տվյալների (ՀԲ, ԱՄՅ, ITU, EIU և այլն), այնպես էլ երկրների ընկերությունների ղեկավարների շրջանում անցկացվող հարցումների արդյունքների վրա (հարցումներն անցկացնում են տվյալ երկրում ՀՏՖ գործընկեր կազմակերպությունները):

ՄՀՁ-ն ունի երկու հիմնական ցուցիչներ. **Համաշխարհային մրցունակության ցուցիչ (ՀԱՄ ցուցիչ) և Գործարար մրցունակության ցուցիչ (ԳԱՄ ցուցիչ):** ՀԱՄ ցուցիչը, որը զեկույցի գլխավոր ցուցիչն է, **110 գործոնների կամ ենթացուցիչների** վրա հիմնվող համապարփակ ցուցիչ է: 110 ցուցիչներն իրենց հերթին խմբավորվում են ըստ **մրցունակության 12 հենասյուների**: Դրանով ամփոփվում են լայն ընդգրկում ունեցող այնպիսի գործոնների վերլուծությունը, ինչպիսիք են երկրների մակրոտնտեսական կատարողականը, հաստատութենական (ինստիտուցիոնալ) զարգացածությունը, առողջապահությունն ու կրթությունը, գործարարության կատարելագործվածությունն ու նորարարության աստիճանը, և այլն: **ԳԱՄ ցուցիչը** կենտրոնանում է առավելապես երկրների **միկրոտնտեսական կատարողականի** վրա՝ ներառելով գործարար միջավայրերին ու գործարարության կատարելագործվածության մակարդակներին վերաբերող գործոններ: Այսպիսով՝ ԳԱՄ ցուցիչով ընդգծվում են մրցունակության միկրոտնտեսական հիմքի կարևոր մանրամասներ և հատուկ ուշադրություն է դարձվում ընկերությունների մակարդակում եղած գործոնների վրա:

ՄՀՁ-ում կիրառվող մրցունակության գնահատման եղանակի վերաբերյալ մանրամասներ կան Հավելված 2-ում, իսկ ՄՀՁ-ում Հայաստանի դիրքը քննարկված է 3-րդ գլխում: